		<p><b>փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 32-րդ հոդված</b></p>	<p>անձը կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել դատական նիստին, ապա դատարանը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողությունները կատարելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, գործին մասնակցող անձանց ծանուցում է այդ մասին:»:</p> <p>2) 7-րդ մասում 3-րդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.</p> <p>«Գործի քննության արդյունավետությունից ելնելով դատարանը կարող է դատական ծախսերի հարցին անդրադառնալ վեճն ըստ էության լուծող եզրափակիչ դատական ակտով:»:</p> <p>3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.</p> <p>«8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգը դատարանի հայեցողությամբ կարող է չկիրառվել, եթե դա բխում է գործի քննության արդյունավետությունից կամ գործին մասնակցող անձինք համաձայն են, որ հայցային վաղեմության հարցին դատարանն անդրադառնա գործի ըստ էության քննության արդյունքում կայացվելիք եզրափակիչ դատական ակտով:»:</p>		
--	--	--	---	--	--

			<p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հողվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>		
<b>«Հ կառավարություն»</b>	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 33-րդ հոդված</b></p>	<p>«Օրենսգրքի 170-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «Օրենսգրքի 170-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.» բառերով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հողվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:	
<b>«Հ կառավարություն»</b>	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 34-րդ հոդված</b></p>	<p>1) «1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝» բառերը փոխարինել «1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.» բառերով:</p> <p>2) « լրացնել նոր 1.1-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.» բառերով:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:	

			<p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հողվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>		
	<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 35-րդ հոդված</b>	<p>Շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Օրենսգրքի 180-րդ հոդվածում՝</p> <p>1) 1-ին մասի «Առաջին ատյանի դատարանը» բառերը փոխարինել «Դատարանը» բառով,</p> <p>2) 1-ին մասի 11-րդ կետը «շարունակելու վերաբերյալ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն գործերի, որոնցում սկզբնական հայցի հետ համատեղ քննվում է նաև հակընդդեմ հայց» բառերը:</p> <p>3) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետով.</p> <p>«12) օրենքով նախատեսված այլ դեպքերում:»:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հողվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:



	<p><b>«Հ կառավարություն</b></p>	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 36-րդ հոդված</b></p>	<p>Շարադրել հետևյալ խմբագրությամբ.  «Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասից հանել «Առաջին ատյանի» բառերը, և «դատարանը» բառը փոխարինել «Դատարանը» բառով:»:</p> <p>Նախագծի համաձայն Նախագծի 36-րդ հոդվածով փոփոխվող 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը նախատեսվում է «առանց քննության թողնելու մասին որոշման» բառերից հետո լրացնել «և ընտանեկան վեճերի վերաբերյալ գործերով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտերի» բառերով: Դատավորների հետ քննարկման և պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Նախագծով առաջարկվող լրացումը կատարելու անհրաժեշտությունը բացակայում է, ուստի առաջարկում ենք Նախագծի 36-րդ հոդվածի 2-րդ մասը հանել Նախագծից:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
	<p><b>«Հ կառավարություն</b></p>	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ</b></p>	<p>1) «Օրենսգրքի 183-րդ հոդվածում» բառերը փոխարինել «Օրենսգրքի 183-րդ հոդվածի՝» բառերով:  2) 2-րդ մասի «մասում» բառերը փոխարինել «մասը» բառով, իսկ «բառերը» բառը փոխարինել «բառերով» բառով:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

		<p><b>կատարելու մասին» օրենքի նախագծի 37-րդ հոդված</b></p>	<p>3) 3-րդ մասի «մասում» բառը փոխարինել «մասը» բառով.</p> <p>4) 4-րդ հոդվածի «լրացնել նոր 10-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով» բառերով և լրացվող 10-րդ մասի «փաստաբան-ներկայացուցիչ ունեցող ֆիզիկական անձը» բառերը փոխարինել « որպես ներկայացուցիչ փաստաբան ունեցող ֆիզիկական անձը» բառերով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն և Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից ներկայացված ձևակերպման վերաբերյալ դիտարկումներն ընդունելուն:</p>		
	<p><b>ՀՀ կառավարություն</b></p>	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ</b></p>	<p>Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասի «կազմում է» բառը փոխարինել «կայացնում է» բառով:»:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

		<b>կատարելու մասին» օրենքի նախագծի 38-րդ հոդված</b>	ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:		
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 39-րդ հոդված</b>	«մասում» բառը փոխարինել «մասի» բառով:  Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:	
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 40-րդ հոդված</b>	Օրենսգրքի Նոր խմբագրությամբ շարադրվող 234.7-րդ հոդվածի վերնագիրը գրել թավ տառերով:  Տվյալ փոփոխությունը անհրաժեշտ է հոդվածի վերնագիրը Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդվածների կառուցվածքի ընդհանուր տրամաբանությանը համապատասխանեցնելու և միատեսակությունը ապահովելու համար:	Ընդունվել է:	Ընդունվել է:	
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական</b>	Լրացնել <b>«Հոդված 234.9. Գործի քննության կարգը»</b> վերնագրով և նոր խմբագրությամբ շարադրվող 234.9-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:	

		<p><b>դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 41-րդ հոդված</b></p>	<p>հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «.» նշանը փոխարինել «:» նշանով</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>		
	<i>«Հ կառավարություն</i>	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 42-րդ հոդված</b></p>	<p>«որոշում:» բառից հետո լրացնել «:» նշանները</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
	<i>«Հ կառավարություն</i>	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 43-րդ հոդված</b></p>	<p>1) 1-ին մասի «երկուհարյուրհինգամսական» բառը փոխարինել «երկուհարյուրամսական» բառով:</p> <p>2) 2-րդ մասից հանել «1-ին մասի» բառերը.</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է Ազգային ժողովի պետական-իրավական մշտական հանձնաժողովի՝ սահմանված չափի վերաբերյալ դիտարկումներն</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ընդունելուն և հողվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:		
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 44-րդ հոդված</b>	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասը «4-րդ մասով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև 340-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով, և «դեպքում» բառը փոխարինել «դեպքերում» բառով:»:  Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հողվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:	
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 45-րդ հոդված</b>	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 365-րդ հոդվածի. 1) 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը, որը անհնար է դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը, եթե հնարավոր չէ	Ընդունվել է:	Ընդունվել է:	

		<p>արձանագրությունը վերականգնել հատուկ համակարգչային ձայնագրման համակարգից.»:</p> <p>2) 3-րդ մասը՝ «2-րդ մասի» բառերից հետո լրացնել «1-ին», «5-րդ» բառից հետո «6-րդ» բառերով, իսկ «և 11-րդ կետերով» բառերը փոխարինել «, 11-րդ և 12-րդ կետերով (բացառությամբ սույն օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքի)» բառերով:»:</p> <p>Նախագծի 45-րդ հոդվածով Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի նոր խմբագրությամբ շարադրվող տարբերակում առաջարկվում է կատարել լրացում, մասնավորապես «պարզելը» բառից հետո լրացնել «, եթե հնարավոր չէ արձանագրությունը վերականգնել հատուկ համակարգչային ձայնագրման համակարգից» բառերով: Առաջարկվող լրացման արդյունքում ապահովվելու է նոր խմբագրությամբ շարադրվող կետի տրամաբանական ամբողջականությունը :</p> <p>Միաժամանակ, Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին</p>		
--	--	---	--	--

			համապատասխանեցնելուն:		
	<b>«Հատավարություն Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 47-րդ հոդված</b>	<p>Շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Օրենսգրքի 371-րդ հոդվածում՝</p> <p>1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.</p> <p>«2.1. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 3.1-ին մասին համապատասխան Վերաքննիչ դատարանի աշխատակազմի կողմից կազմվում է արձանագրություն վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը հաշվարկվում է արձանագրությամբ մատնանշված թերությունները վերացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:».</p> <p>2) 3-րդ մասում «թույլ տրված» բառերից հետո լրացնել «բոլոր» բառը:</p> <p>3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1, 3.2, 3.3.-րդ մասերով.</p> <p>«3.1. Եթե ներկայացված վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոք բերող անձը թույլ է տվել սույն հոդվածի 368-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերի խախտումներ կամ բողոքին</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:	

		<p>կցված չէ բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները կամ վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը, Վերաքննիչ դատարանի գրասենյակը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) ոչ ուշ քան մինչև համապատասխան դատավարական ժամկետը լրանալուց երեք օր առաջ տեղեկացնել բողոք բերող անձին վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին՝ առաջարկելով մինչև եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում Վերաքննիչ դատարանի գրասենյակը նույն ժամկետում կարող է կազմել վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է բողոք բերող անձին:</p> <p>3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասում նշված թերությունները վերացվելուց</p>		
--	--	---	--	--



		<p>հետո Վերաքննիչ դատարանը սույն օրենսգրքի 370-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մերժելու հիմքերը կամ վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:</p> <p>3.3. Սույն հոդվածի 3.1.-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում Վերաքննիչ դատարանը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին:»:</p> <p>4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«4. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերած անձին ուղարկվում են վերաքննիչ դատարանի որոշումը, վերաքննիչ բողոքը և դրան կից ներկայացված այն փաստաթղթերը, որոնցում հայտնաբերվել են թերություններ՝ միաժամանակ գործին կցելով դրանց պատճենները: Այդ դեպքում բողոքը բերող անձը բողոքը կրկին ներկայացնելիս դրան չի կցում</p>		
--	--	---	--	--

			<p>վերաքննիչ դատարանի կողմից չվերադարձված փաստաթղթերը: Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ուղարկվում է նաև գործին մասնակցող այլ անձանց:»:</p> <p>5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով`</p> <p>«5.1. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է մի քանի անձանց կողմից Վերաքննիչ դատարանը բողոքում առկա թերություններ թույլ տված անձի համար սահմանում է սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետ` այդ թերությունները շտկելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:»:</p> <p>Հիմք ընդունվելով Ազգային ժողովի փորձագիտական և վերլուծական վարչության եզրակացության 31-րդ հետը, որով առաջարկվել է Նախագծի 47-րդ հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 371-րդ հոդվածում լրացվող 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ մասերում նախատեսված իրավադրոյթները վերանայել` Օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նախատեսված վերաքննիչ բողոքի վերադարձման հիմքի համատեքստում` հակասությունները</p>		
--	--	--	---	--	--

			<p>բացառելու նպատակով, առաջարկում ենք Նախագծի 47-րդ հոդվածով Օրենսգրքի 371-րդ հոդվածում լրացվող 3.3.-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ, ինչպես նաև հոդվածի ձևակերպումը համապատասխանեցնել « Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքին պահանջներին:</p>		
	<p><b>«Կառավարություն</b></p>	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 48-րդ հոդված</b></p>	<p>Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 372-րդ հոդվածում 1-ին մասը՝</p> <p>1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.</p> <p>«1.1) սույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ է տվել նոր խախտումներ.»:</p> <p>2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«6) վերաքննիչ բողոքը բերվել է գույքային պահանջով քաղաքացիական գործով, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերող անձն իր վերաքննիչ բողոքում հիմնավորում է, որ առաջին</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

		<p>ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ.»:          3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.          « 8) բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքում.»:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին և սույն առաջարկություններով Նախագծում կատարվող լրացումներին համապատասխանեցնելուն:</p>		
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 49-րդ հոդվածի 7-րդ մաս</b>	<p>«դեպքերի» բառից հետո լրացնել «:» նշանով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության</b>	Շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Ընդունվել է:	Ընդունվել է:

		<p><b>քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 50-րդ հոդված</b></p>	<p>«Օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասը «Վճռի» բառից հետո լրացնել «, այլ եզրափակիչ դատական ակտերի» բառերով:»:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>		
	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 52-րդ հոդված</b></p>	<p><b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 52-րդ հոդված</b></p>	<p>1) «387-րդ հոդվածում» բառերը փոխարինել «387-րդ հոդվածի» բառերով:</p> <p>2) 1-ին մասի «մասի երկրորդ նախադասությունում» բառերը փոխարինել «մասը» բառով:</p> <p>3) 2-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:</p> <p>4) 3-րդ մասի «մասում» բառը փոխարինել « մասը» բառով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն և Ազգային ժողովի փորձագիտական և վերլուծական վարչության եզրակացության առաջարկն</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

			ընդունելուն:		
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 53-րդ հոդված</b>	<p>1) «389-րդ հոդվածում» բառերը փոխարինել «389-րդ հոդվածի» բառերով:</p> <p>2) «1-ին մասը լրացնել նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1.-ին մասով.» բառերով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:	
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 54-րդ հոդված</b>	<p>«Օրենսգրքի 391-րդ հոդվածում լրացնել նոր 2.1-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «Օրենսգրքի 391-րդ հոդվածը լրացնել՝ հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով» բառերով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:	

			համապատասխանեցնելուն:		
<b>«ՀՀ կառավարություն»</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 55-րդ հոդված</b>	«կետում» բառերը փոխարինել «կետի» բառով:  Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:	
<b>«ՀՀ կառավարություն»</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 56-րդ հոդված</b>	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. Օրենսգրքի 395-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջներին, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը, կամ վճռաբեկ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ: Եթե ներկայացված վճռաբեկ բողոքի	Ընդունվել է:	Ընդունվել է:	

		<p>ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոք բերող անձը թույլ է տվել սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի խախտումներ կամ բողոքին կցված չէ բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները կամ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը, Վճռաբեկ դատարանի գրասենյակը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել բողոք բերող անձին վճռաբեկ բողոքում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում Վճռաբեկ դատարանի գրասենյակը նույն ժամկետում կարող է կազմել վճռաբեկ բողոքում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է բողոք բերող անձին:»:</p> <p>2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին, 1.2-րդ, 1.3-րդ մասերով.</p>		
--	--	--	--	--



			<p>«1.1. Սույն հոդվածի 1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո Վճռաբեկ դատարանը սույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում կայացնում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու կամ առանց քննության թողնելու հիմքերը կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:</p> <p>1.2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում Վճռաբեկ դատարանը սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:</p> <p>1.3. Այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքում առկա թերությունների վերացման համար բողոք բերող անձը չի տեղեկացվում, այդ թվում՝ երբ արձանագրություն չի կազմվում, և վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջներին, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ</p>		
--	--	--	---	--	--

		<p>դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը կամ վճռաբեկ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ, վճռաբեկ բողոքը վերադարձվում է:»:</p> <p>2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով. «3.1. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է մի քանի անձանց կողմից Վճռաբեկ դատարանը բողոքում առկա թերություններ թույլ տված անձի համար սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ այդ թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:»:</p> <p>17) Նախագծի 56-րդ հոդվածով առաջարկվում է Օրենսգրքի 395-րդ հոդվածը լրացնել նաև հետևյալ բովանդակությամբ 1.2.-րդ մասով, որի Նախագծի 1-ին ընթերցմամբ ընդունված ձևակերպումը կարող է տարրնկալման պատճառ դառնալ, ուստի առաջարկում ենք 1.2.-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում Վճռաբեկ</p>		
--	--	--	--	--

			<p>դատարանը սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:»:</p> <p>Միաժամանակ, առաջարկվում է հոդվածի ձևակերպումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի ձևակերպումներին:</p>		
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 57-րդ հոդվածի 2-րդ մաս</b>	<p>«լրացնել նոր 8-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.» բառերով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն և տվյալ հոդվածի ձևակերպման տարրնկալումները վերացնելուն:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:	
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ</b>	<p>«կետում» բառը փոխարինել «կետը» բառով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:	

		<b>կատարելու մասին» օրենքի նախագծի 58-րդ հոդված</b>	համապատասխանեցնելուն:		
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 59-րդ հոդված</b>	<p>1) «կետում» բառը փոխարինել «կետը» բառով.</p> <p>2) հանել «ՀՀ» բառը:</p> <p>3) «բառերը» բառը փոխարինել «բառերով» բառով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:	
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 60-րդ հոդված</b>	<p>1) «մասում» բառը փոխարինել «մասը» բառով.</p> <p>2) «բառերը» բառը փոխարինել «բառերով» բառով:</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:	
<b>ՀՀ կառավարություն</b>	<b>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության»</b>	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Սույն օրենքի 2-րդ, 10-րդ, 13-րդ և 30-րդ հոդվածներով նախատեսված	Ընդունվել է:	Ընդունվել է:	

		<p><b>օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 61-րդ հոդված 2-րդ մաս</b></p>	<p>դրույթները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված հայցադիմումներով գործերի քննության վրա:»</p> <p>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է անցումային դրույթի հղումները Նախագծի հոդվածների նոր համարակալմանը համապատասխանեցնելուն</p>		
	<p><b>ՀՀ կառավարություն</b></p>	<p><b>«Հայաստանի Հանրապետության «Նոտարիատի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը</b></p>	<p>Նախագիծը լրացնել հարակից օրենքում լրացումներ և փոփոխություններ նախատեսող նոր օրենքի նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p><b>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b></p> <p><b>Հոդված 1.</b> «Նոտարիատի մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 82.4-րդ հոդվածի 5-րդ մասը «մերժելու մասին որոշում» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքի 82.9-րդ հոդվածի 1.1.-ին</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

		<p>մասով նախատեսված հիմքով դիմումը մերժելու դեպքի» բառերով:</p> <p><b>Հոդված 2.</b> Օրենքի 82.6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «տույժի» բառից հետո « և » բառը փոխարինել « , » նշանով, և «տոկոսների» բառից հետո լրացնել «և այլ վճարների» բառերով:</p> <p><b>Հոդված 3.</b> Օրենքի 82.7.-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «մասում » բառը փոխարինել «կամ 2-րդ մասերում» բառերով.</p> <p><b>Հոդված 4.</b> Օրենքի 82.9-րդ հոդվածի՝</p> <p>1) 1-ին մասում՝</p> <p>ա. 1-ին կետը «որոշում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված հիմքով դիմումը մերժելու դեպքի» բառերով.</p> <p>բ. 2-րդ կետի «սահմանված ժամկետում չի վերացրել» բառերը փոխարինել «սույն օրենքի 82.7-րդ հոդվածի 1-ն մասով նախատեսված հիմքով վերադարձրած դիմումը կրկին ներկայացրել է նոտարին՝ սահմանված ժամկետում չվերացնելով» բառերով.</p> <p>գ. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«4) գործարքի՝ պահանջի հիմքում ընկած որևէ էական պայման առ ոչինչ է.».</p>		
--	--	--	--	--

			<p>դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-6-րդ կետերով.</p> <p>«5) դիմումը ներկայացվել է մինչև դիմում ներկայացնելը մահացած ֆիզիկական անձի կամ լուծարված իրավաբանական անձի դեմ.</p> <p>6) ներկայացվել է պարտապանի կողմից իր պարտավորությունը կատարելու վերաբերյալ ապացույց:».</p> <p>2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-ին մասով.</p> <p>«1.1. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի մասին պարտապանին ծանուցելուց հետո մինչև գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ կարգադրություն արձակվելը կամ դիմումը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից մեկով մերժվելը, դիմողը կարող է ներկայացնել ներկայացված պահանջից հրաժարվելու դիմում: Նշված դիմումը ստանալուց հետո նոտարը եռօրյա ժամկետում մերժում է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը:».</p> <p>3) 2-րդ մասից՝</p> <p>ա. հանել «պարտապանը ծանուցում ստանալուց հետո՝ սահմանված 20-օրյա ժամկետում»</p>		
--	--	--	---	--	--

		<p>բառերը.</p> <p>բ. 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«1) պարտապանը ծանուցում ստանալուց հետո՝ սահմանված 20-օրյա ժամկետում ներկայացրել է առարկություն կամ կատարել է վճարման պահանջը.</p> <p>2) մահացել է ֆիզիկական անձ պարտապանը կամ լուծարվել է իրավաբանական անձ պարտապանը.»:</p> <p>3) 4-րդ մասը «իրավունքից» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված հիմքով դիմումը մերժելու դեպքի: Սույն հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված հիմքով նոտարի կողմից դիմումը մերժելու դեպքում նույն պահանջով կրկին ներկայացված դիմումը ենթակա է քննության նոտարի կողմից» բառերով.</p> <p><b>Հոդված 5.</b> Օրենքի 82.10-րդ հոդվածի՝</p> <p>1) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«2) նշում բռնագանձվող գումարի ընդհանուր չափի վերաբերյալ, առանձին նշելով՝ բռնագանձվող գումարի ընդհանուր չափի մեջ ընդգրկված հիմնական պարտավորության, տուժանքի (տուգանքի, տույժի), տոկոսների կամ այլ վճարների չափերը, ինչպես նաև</p>		
--	--	---	--	--



		<p>այն գումարի չափը, որի վրա հաշվեգրվում են տուժանքները (տուգանքներ, տույժեր) տոկոսները կամ այլ վճարները, դրանց հաշվեգրման սկզբի տարին, ամիսը և ամսաթիվը:».</p> <p>2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.</p> <p>«6. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում, ինչպես նաև մինչև պարտադիր դարձած գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը նոտարի կողմից էլեկտրոնային հաղորդագրությամբ հարկադիր կատարման ուղարկելը ընկած ժամանակահատվածում պարտապանի պարտավորության կատարման վերաբերյալ ապացույց ներկայացվելու դեպքում նոտարը կարգադրությունը չի ուղարկում հարկադիր կատարման՝ այդ մասին համակարգում կատարելով համապատասխան նշում և ծանուցելով դիմողին:»:</p> <p><b>Հոդված 6.</b> Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»</p> <p>Ներկայացվող նախագծով առաջարկվում է.</p> <p>1. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումում</p>		
--	--	--	--	--

		<p>ներկայացնել նաև առկայության դեպքում <b>այլ վճարների</b> գումարների հիմքը և չափը:</p> <p>2. Որպես դիմումը վերադարձնելու հիմք նախատեսել նաև 82.4-րդ հոդվածի 2-րդ մասը:</p> <p>3. Հստակեցնել, ինչպես նաև լրացնել գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը մերժելու հիմքերը, մասնավորապես, նախատեսել, որ դիմումը մերժվում է եթե.</p> <p>ա. գործարքի՝ պահանջի հիմքում ընկած որևէ էական պայման առ ոչինչ է,</p> <p>բ. դիմումը ներկայացվել է մինչև դիմում ներկայացնելը մահացած ֆիզիկական անձի կամ լուծարված իրավաբանական անձի դեմ.</p> <p>գ. ներկայացվել է պարտապանի կողմից իր պարտավորությունը կատարելու վերաբերյալ ապացույց:</p> <p>4. Նախատեսել, որ ծանուցումը ուղարկելուց հետո նոտարը մինչև կարգադրությունը արձակելը, հնարավորություն ունենա կարգադրության արձակումը մերժելու այն հիմքով, որ մահացել է ֆիզիկական անձ պարտապանը կամ լուծարվել է իրավաբանական անձի պարտապանը:</p> <p>Նախատեսվել է նաև առանձին հիմք,</p>		
--	--	--	--	--

			<p>ըստ որի նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի մասին ծանուցումը ուղարկելուց հետո դիմողը հրաժարվել է պահանջից:</p> <p>Հարկ է նկատի ունենալ, նաև, որ այն դեպքում, երբ դիմումը մերժվում է դիմողի կողմից դրանից հրաժարվելու հիմքով, դիմումատուն կրկին նույն պահանջով կարող դիմել նոտարին, այլ ոչ թե դատարան:</p> <p>5. Հստակեցվում է արձակվող կարգադրության բովանդակությունը:</p> <p>6. Նախատեսվում է հնարավորություն, կարգադրությունը արձակելուց հետո պարտավորությունը կատարելու վերաբերյալ ապացույց ներկայացվելու դեպքում կարգադրությունը հարկադիր կատարման չուղարկելու վերաբերյալ:</p> <p>7. Նախատեսվում է նշված գործերով հարկադիր կատարման փուլում հաշտություն կնքելու և այն նոտարի կողմից հաստատելու հնարավորություն:</p>		
	<p><b>ՀՀ կառավարություն</b></p>	<p><b>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացում կատարելու</b></p>	<p>Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ հարակից օրենքում լրացումներ և փոփոխություններ նախատեսող նոր օրենքի նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p><b>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</b></p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

		<p><b>մասին» օրենքի նախագիծ</b></p>	<p align="center"><b>Օ Ր Ե Ն Ք Ը</b>  <b>«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»</b>  <b>ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b></p> <p><b>Հոդված 1.</b> «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «դատարանը» բառից հետո լրացնել «,իսկ գումարի բռնագանձման պահանջով նոտարի արձակած կարգադրության կատարման վարույթի դեպքում՝ նոտարը» բառերով.</p> <p><b>Հոդված 2.</b> Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:</p> <p>Տվյալ նախագծի ընդունումն ուղղված է ապահովելու նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու և այն հարկադիր կատարման ուղարկելու դեպքում հաշտության համաձայնություն կնքելու հնարավորության նախատեսմանը, որը ենթակա կլինի հաստատման նոտարի կողմից:</p>		
--	--	-------------------------------------	--	--	--